ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Հանրապետության պատմագիտական ու հասարակագիտական միտքը, բարձրագույն գպրոցը անդառնալի կորուստ կրեցին: Կյանքի 73-րդ տարում, երկարատև ծանր հիվանդությունից հետո վախճանվեց անվանի պատմաբան, Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ, Պատմաբանների Հայկական ընկերության նախագահ, ակադեմիկոս Լենդրուշ Արշակի Խուրշուդյանը:

Լ. Խուրշուդյանը ծնվել է 1927 թ. մայիսի 1-ին Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում, ծառայողի ընտանիքում: 1946 թ. ավարտել է Երևանի Ս. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը: 1946–1951 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, 1951–1954 թթ՝ համալսարանի ասպիրանտուրայում: 1956 թ. պաշտպանել է «Ստեփան Շահումյանի կուսակցական և պետական գործունեությունը 1917–1918 թթ.» թեկնածուական դիսերտացիան և աշխատանքի անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Այնուհետև տեղափոխվել է մանկավարժական աշխատանքի. եղել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ամբիոնի վարիչ, որից հետո 22 տարի շարունակ գլխավորել է Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնը:

Լ. Խուրշուդյանը պատմական գիտությունների դոկտոր էր 1966 թ., պրոֆեսոր՝ 1980 թ., 1990 թ. ընտրվել է ԳԱ թղթակից-անդամ, 1996-ին ակադեմիկոս: Նա Պատմաբանների Հայկական ընկերության նախագահն էր, ՀՀ կառավարության և ԳԱԱ փորձաքննական հանձնաժողովի նախագահ, ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտների գիտական աս-

տիճաններ չնորհող մասնագիտացված խորհուրդների անդամ, ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի «Լրաբեր» հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ, «Բանբեր Երևանի համալսարանի», «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսների խմբագրական կազմի անդամ և այլն:

Լայն և ընդգրկուն են Լ. Խուրշուդյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները: Նա հեղինակ է շուրջ 100 գիտական աշխատությունների, այդ թվում 14 գրքերի և կոլեկտիվ մենագրությունների: Նրա աշխատությունները հիմնականում նվիրված են հայ ազգային-ազատագրական շարժումների, Հայկական հարցի, հայ քաղաքական կուսակցությունների, հայոց ցեղասպանության, սփյուռքի պատմության, Հայաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումների, հայ պատմագրության ամենատարբեր հարցերին: Գիտական անուրանալի արժանիքներ ունեն պատմաբանի «Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում» 1964 թ., «Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը» 1977 թ., «Հայ քաղաքական կուսակցությունների պատմության և գաղափարախոսության մի քանի հարցեր» 1980 թ., «Լեռնային Ղարաբաղ. պատմական տեղեկանք» 1988 թ. հեղինակակից, «Ճշմարտությունը պատմական գիտության միակ չափանիշն է» 1989 թ., «Հայկական հարց» 1995 թ. մենագրություններն ու բազմաթիվ այլ աշխատություններ: Նա հեղինակներից է «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության ութհատորյակի: Մահից քիչ առաջ տպագրեց «Հայոց ազգային գաղափարախոսություն» մենագրությունը: Լ. Խուրշուդյանի շատ աշխատություններ լուրջ ներդրում են հայ պատմագիտության մեջ, նոր խոսք և ուղենիշ հետագա ուսումնասիրողների համար:

Լ. Խուրշուդյանը նշանակալի ավանդ ունի երիտասարդ մասնագետների պատրաստման բնագավառում, իր մանկավարժական 25-ամյա անդուլ գործունեության ընթացքում նա կրթել և դաստիարակել է պատմաբանների բազմաթիվ սերունդներ: Լ. Խուրշուդյանը կաբինետային, հասարակությունից կտրված գիտնական չէր: Բոլորին է հայտնի նրա կարևոր մասնակցությունը հանրապետության հասարակական կյանքին, Ղարաբաղյան շարժմանը, նրա գործուն մասնակցությունը ազգային-ազատագրական շարժման արդի էտապի դաղափարախոսության մշակման գործում:

Հանձին Լ. Խուրշուդյանի, պատմագիտությունն ու հասարակական միտքը կորցրին տաղանդավոր մտավորականի, որն իր ամբողջ կյանքը նվիրաբերեց հարազատ ժողովրդին բոլորանվեր ծառայելուն: Նրա պայծառ հիշատակը վառ կմնա մեր սրտերում:

ՀՀ կրթության - գիտության նախարարություն
Եր-անի պետական համալսարան
ՀՀ ԳԱԱ ակադեմիա